

գտնուում: Բայց սուրբ մտքով Քեզ վրայ մտածելով, և միշտ Քեզ իմ աչքիս առաջն ունենալով, ինքս ինձ Հետ խիստ կերպով վարուող եմ դառնում՝ մի անաչառ և արդար դատաւորի նման՝ և գրեթէ Հսկայական ոյժ եմ ստանում՝ իմ մէջս բնակուած շատ ու շատ տեղ անյաղթ չարին յաղթելու: Ես ինձ այնտեղ պէտք է Հասցնեմ, ո՞վ սրտագէտ Տէր, որ պարզ ու զուարթ երեսով մարդոց ու Քո առաջ դուրս գալ կարողանամ:

Գ. Ե. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ ԱՌԱՋ.

(շարունակութիւն)

Մի խօսքով անհնարին է թուել բոլոր ստրուկներին, որոնք նշանակած էին Հռովմայեցի Հարստի տանը ամենանշան պաշտօնների Համար: Հռովմի Ս. Սեբաստիանոսի եկեղեցու դրանը գտանուող մի յիշատակարանի արձանադրութեան մէջ յիշվում են 32 ստրուկներ, որոնք եկած են Հռովմ իբրեւ ուղեկիցներ իրանց ճանապարհորդող տիրոջ, որ Հռովմում վախճանում է և ինքն էլ ոչ այլ ոք է եղած, բայց եթէ մի Հարստացած ստրուկ: Երբեմն ճանապարհորդող Հարուստը տանում էր Հետը Հազարաւոր ստրուկներ, որոնց մէջ մինչև անգամ լինում էին երգեցիկների խմբեր: Կարելի է երեւակայել, թէ որպիսի աղմուկ և շարժողութիւն ընկնում էր Հարստի տանն, երբ մի բարձրաստիճան ոմն արժանի էր անում նրան իւր այցելութեան և որպիսի օրդու — բանակ Հետեւում էր կայսրներին: Երբ սկսուում էր խրախճանն ի պատիւ գալստեան բարձրաստիճան Հիւրի, Հարիւրաւոր գեղեցիկ մանկունք շրջապա-

տում էին ուրախութիւն անողներին և նստում էին նոցա ոտերի մօտ. այս մանուկներն ամեն ազգերից էին, ընտրած ըստ հասակին և ըստ ազգութեան — սոքա էին կազմում խումբերն այն երգիչ տղայոց և աղջկանց, որոնց մասին յիշում է Կլեմէսը: Առանձին դաստիարակներ նշանակած էին այս խեղճ մանկանց կրթութեան և վարժութեան համար, այս վարժիչները աշխատում էին վաղաժամ կատարել նոցա բարոյական և մարմնաւոր զարգացումն: Առանձին արհեստաւորներ կային, որոնք հագցնում էին այս երգիչներին համեմատ նոցա երեսի գոյնին և զարդարում էին թանգազին քարերով: Բայց, աւաղ, այս մանուկներն երկար ժամանակ չէին զուարճացնում իրանց տէրերին, վաղաժամ և անբնական զարգացումն նրանց շուտով գերեզման էր իջեցնում, նոքա իբրև քնքոյշ և չքնաղ ծաղիկներ շուտ բացուում էին, բայց և շուտ թառամում: Այս վաղամեռիկ թշուառ արարածների գերեզմանների վերայ տէրերը յիշատակարան էին դնում brevis voluptas արձանագրութեամբ, որ կարելի է թարգմանել. «Հեշտասիրութեան ծառայող ստրուկներն երկար չեն ապրում»: Առ հասարակ հարուստ հռովմայեցու տանը ծանր աշխատանքից կամ թլացուցիչ պարապութիւնից (միջին վիճակ չկար) ստրուկները բազմաթիւ խմբերով մեռնում էին. նոցա ծնունդը շատ աննշան էր:

Հին ստրուկներն իրանք խոստովանում էին այս. ստրուկների վաճառանոցում դեռ ևս ստրկութիւնը չիորձած ստրուկի գինը բարձր էր քան նորա, որ թէ և կարճ ժամանակ ստրկական լուծը տարած էր: Ստրկութիւնը թուլացնում էր թէ մարմինն և թէ հոգին, ըստրուկները շուտ թուլանում էին, իսկ նոցա յետագայ սերունդների մէջ մարմնոյ թուլութիւնն և բթամտութիւնն աւելի նկատելի լինում էին: Եթէ Հին աշխարհում ստրկութիւնն էլի մի քանի դար շարունակուէր, Հին աշխարհի բոլոր քաղաքակրթութիւնը բարբարոսութեան կիողխուէր:

Կայսերական թաճանակի ու միայն բարձր մշակութիւնն յետագայում արդարեւ ինչ-որ բարձր զբոսնեցաւ ելն. այլ ստրկութիւնն ուղից է գեղեցիկ արհեստներէ լինել վերայ: Իմաստուն մարդիկ և այն ժամանակ նկատում էին, որ առաջին դարի վերջից սկսուեցաւ

արհեստների մեծ անկումն: Ֆլաւիոսների ժամանակ քանդակագործութիւնը կեռ ևս Հետեւում էր իւր նախկին մեծ աւանդութեանց. բայց նկարչութիւնն աշխարայ կերպով գնում էր դէպի անկումն, աւելի և աւելի դառնալով զարդերի ու պաճուճանքի նկարչութիւն, ու կորցնելով իւր կենդանութեան, մաքրութեան և վսեմութեան բնաւորութիւնը: Պլինիոսը խոստովանում է, որ նորա ժամանակները նկարչութիւնը կորցրել էր իւր կենսական նշանակութիւնն և դարձել զգայականութեան, հաճոյից և պարապ Հետաքրքրութեան ծառայ: Վնա ոչ միայն ոյժ չունէր արտայայտելու հոգին, ասում է այս մատենագիրը, այլ և կորցրել էր մարմինը նկարելու գաղտնիքը. մեղկութիւնն և պարապորդութիւնն ոչնչացրին գեղարուեստը: Շատ բազմանշան խօսքեր են: Ազատ մարդը դադարեց ծառայելու արուեստին և տուեց այն ստրկի ձեռքն և այս արուեստը պէտք է կորցնէր իւր համաշխարհային նշանակութիւնն և կորչէր անդառնալի կերպով:

Երբեք-բո՞ւնեան վերայ էլ, որ Կելսոս-նեան Երեմիայի անդառնալիքն է, «արիւն-նեանը նշնալի», ինչպէս և յետագործ-նեան վերայ, որեց իւր ծառը յետ: Պետական հարստութեան այս ճիւղից էլ աքսորեց նա ազատ աշխատանքն և երկրի անհոգ մշակութեամբ սպառեց Խտալիայի երբեմն հարուստ հողի ոյժն, ապա և հռովմէական մեծ կայսերութեան նահանգների հողինն էլ:

Նախ և առաջ անհրաժեշտ է պարզաբանել, թէ ինչպէս ստրկական աշխատանքը սկսաւ գործադրուել ընդարձակ ձևով երկրագործութեան համար հռովմէական կայսերութեան մէջ: Հին օրէնքներն, որքան հնար էր, առաջն առնում էին հասարակաց գետինների յափշտակութեան և հողային սեպականութեան կենդրոնացուման քչերի ձեռքերում, կարծես նախագուշակելով. որ ընդարձակ կալուածներն և հողերը հարուստների կզարգացնեն և ստրկութիւնը: Դեռ 365 տարի Քրիստոսի ծննդից առաջ հռովմէական հասարակապետութեան մէջ հաստատուեցաւ օրէնքն, որով իւրաքանչիւր քաղաքացի կարող էր պետական կալուածներից վայելել ոչ աւելի քան 500 եուգէր (իւրաքանչիւրը 240 ոտք երկարութեամբ և 120 ոտք լայնութեամբ տարածութիւն) գետին: Այս Լիկինիոս

Ստոլայի օրէնքն էր:

Միւս օրէնքով մինչև անգամ որոշուած էր անհրաժեշտ թիւն ազատ մարդոց, որոց պարտական էր ունենալու իւրաքանչիւր կալուածատէր աշխատանաց վերայ հսկելու կամ նորա գետինը մշակելու համար: Պարզ է, որ օրէնքի նպատակն էր առաջն առնել երկրրադործ դասակարգի գաղթականութեան:

Բայց հռովմէական հասարակապետութեան մէջ երբէք երկարատեւ գոյութիւն չէին ունենում հին կարգադրութիւնք, որոնք նոցա բարօրութեան համար էին: Հարուստների ջանքերն ու իշխանութեանց չարագործութիւնք այնտեղը հասցրին դժբն, որ 401 տարիից յետոյ Իտալիայում գրեթէ չմնաց ազատ երկրրադործ: Հասարակապետութեան յաղթութիւնք չէին հարստացնում հռովմի ազատ քաղաքացիներին, այլ ընդհակառակն նոցա մեծամասնութիւնն աղքատութեան հասցրին: Իւրաքանչիւր գիւղատնտես պատերազմ գնալով, առանց հսկողութեան թողնում էր իւր տնտեսութիւնն և շատ անգամ նորա հողաբաժինն ընտանիքը գրաւ էր դնում և ապա ծախուում էր աճրդով:

Երբ պատերազմը յաջող ելք էր ունենում, Պատրիկները ձեռք էին ձգում աւելի ընդարձակ գետիններ իսկ ոչ — հարուստ քաղաքացիների ձեռքերից դուրս էին գնում տակաւ առ տակաւ հողային կալուածներն Իտալիայում: Բացի սրանից փառասէր անձինք, որոնք հասարակապետութեան վերջին օրերում պատերազմում էին միմեանց դէմ իշխանութեան համար, երբ յաղթող էին հանդիսանում իրանց հակառակորդների դէմ իսկոյն աշխատում էին վարձատրել իրանց կողմնակիցներին և խլելով ազատ անձանց հողաբաժինները տալիս էին իրանց կուսակցութեան անձանց: Սիւլլան ամբողջ գիւղերի և քաղաքների բնակիչներին աքսորեց և բնակեցրեց իւր հին զինուորներին տէրերից խլած գետինների վերայ: Միւս կողմից զինուորները կալուածատէր դառնալով չկարողացան սիրով և ճարտարութեամբ գբադուել տնտեսութեամբ, ուստի և նոքա շուտով սնանկացան կամ վատնելով և կամ արժան գնով իրանց հողաբաժինները հարուստներին վաճառելով:

Հրատարակուեցան օրէնքներ, որոնք արգելում էին հին զինուոր-

ներին իրանց գետինները վաճառել, բայց այս օրէնքներն օգնում էին միայն գետինների գներին անկման և էլի վերջ ի վերջոյ նոցա Հետեանքը լինում էր այն, որ գետինները գնում էին Հարուստները: Գետինների վաճառումն առաջացրեց դժգոհների դասակարգ և նկատման արժանի է, որ Կատիլինայի դաւաճանութեան մասնակցողների մեծ մասը կազմում էին սնանկացած հողատէրերն և առաւելապէս Հին գինուորներն, որոնք Սիւլլայի ժամանակ Հարստացել էին: Նոյն իսկ աքսորքները նպաստեցին բացառապէս ոմանց Հարստանալուն միայն. բաւական էր միայն մի հողատէր մատնութիւն անէր նոր կառավարութեան իւր դրացու վերայ, իբրև Հին կառավարութեան կուսակից մարդու վերայ և մատնիչն իսկոյն ստանում էր նորա հողաբաժինը: Ըստ ասութեան Կիկերոնի այսպէս Հարստացաւ Վալգիոս, տրիրուն Ռուլլուսոնի պապը. այսպէս Հարստացաւ Գերպին, որ ձեռք բերեց Սիւլլայի ժամանակ Սամնիոնի բոլոր դաշտերի չորրորդ մասը: Երկիւղն այնպէս մեծ էր, որ Սիւլլայի ընկերակիցներից մէկը 400 ըութլիով ձեռք բերեց Ռօսցիոսի հողաբաժինն, որ արժէր 1,230,000 ուոբլի, տէրն ուրախ էր այդ գնով էլ վաճառելու իւր կալուածքն, որպէս զի նրանից ձրի չգրկուի: Ինչպէս կոչում է Կուենտիլիանոսը. երկիրների հեղեղումն կատարուեցաւ աստիճանաբար, բայց Խտալիայի զանազան մասերում ոչ միակերպ. նորա մի քանի մասերում փոքրիկ կալուածոց տէրերն աքսորուեցան առաջին դարում. իսկ միւս մասերում մնում էին մինչև երրորդ դարը: Ովրատիոսի, Կուինտիլիանոսի և Պլինիոսի շարադրութեանց մէջ մենք, կարծես, լսում ենք խիստ մարդաբէական խօսքերի արձագանքը. «Վայ այնոցիկ, որ յարեն տուն ի տուն, և ագարակ առ ագարակ մերձեցուսցեն, զի զընկերին Հանիցեն, միթէ միայն բնակելոց իցէք յերկրի (Յսայի. գլ. Ե. 8.): Կուինտիլիանոս արտայայտեց Հարուստների անարդար Հալածանքներն և այն ժամանակուան մանր կալուածատէրերի ծանր վիճակը մի փոքրիկ, բայց ընտիր կերպով մշակած թատերերգութեան մէջ: Ահա նորա բովանդակութիւնը. Մի Հարուստի դրացի է մի ազատ աղքատ, որ իւր հողի վերայ ունի փեթակ: Հարուստին դուրեկան չէ, որ նորա պարտեզի ծաղիկներից անկոչ մեղունները մեղր են քաղում. նա Հրամայում է ծաղիկներին

վերայ մի անօթ թոյն ածել և դրացու մեղուները կոտորվում են: Աղքատը վշտանում է և իւր վիշտն արտայայտում է տխուր մենախօսութեան մէջ: Նա միտն է բերում թէ ինչպէս վաղ ծաղկում էին նորա շրջակայք, ուր այժմ մնացել է միայն նորա հողաբաժինը. այս երկիրը փոքրիկ մասեր բաժանած վաղ ժամանակ ծաղկած էր նման ծաղիկների կողովի, բայց հարուստը յափշտակեց այդ հողաբաժիններն, որոնք կերակրում էին աղքատների ամբողջ խումբ և դարձնում է իւր համար պարտէզ և ճեմելիք և մինչև իսկ անապատ. հալածանքներով և ճնշումներով նա ստիպում է դրացիներին թողնել իրանց գոյքը, քանդում է նոցա նախկին հին սրբութիւնքն և նոքա ամենքը հեռանում են լուռ յուսահատութեամբ ձեռքերը ճմլելով, նոցա կանայք և զաւակունք մերձաւոր բլրից իրանց հայեացքը գցում են իրանց հայրենի սրբատեղերի վերայ: Բայց աղքատին չեն օգնում ոչ գանգատներն և ոչ էլ ջանքերն ողորմութիւն գտնելու գոռոզացած հարստից, որին բարկացրել են մեղուները. նա չէ կամենում աղքատից ընծայ ստանալ մեղր, որ ամենընտիրն է բոլոր երկրում, նա ուզում է հարուստ դրացի ունենալ և վերջ ի վերջոյ ստիպում է հեռանալ իւր հողաբաժանից աղքատ դրացուն:

«Այսպէս հարուստների անյազ ագահութիւնը պատրաստ է բոլոր երկիրն անապատ դարձնելու», ասում է վերջաբանութեան մէջ Կուինտիլիանոս:

Պաշտօնական վկայաթղթից, այն է Տիրերիոսի նամակից ծերակոյտին Փրկչի 22 թուականից երևում է, որ նորա ժամանակի հարուստներն ունէին ընդարձակ հողային կալուածներ, ուր պարապում էին երկրագործութեամբ ստրուկների ամբողջ բանակներ, որոնք իրանց թուով կարող էին հաւասարուել առանձին փոքրիկ թագաւորութեան: Այն ժամանակուան պետական անձինք, ինչպէս զորօրինակ Սենեքան, ստրուկների այդ բազմութեան և հողային կալուածների կենդրոնացման մէջ մի քանիսների ձեռքում, տեսնում էին կայսերութեան շուտափոյթ կորուստը, բայց նոցա ձայնը մնաց ձայն բարբառոյ յանապատի և մեծամեծաց յափշտակութիւնըն այնտեղ հասաւ, որ, ըստ վկայութեան Պլինիոսի, ներքին ժամանակ վեց հարուստներ իրանց սեպհականացրին Ափրիկէ նահանգի

կէսը: Մի արձանագրութիւն, որ պահպանած է մի հարստի ամա-
րանոցում, Լատինական ճանապարհի վերայ և 134 թուականին
է գրած Քրիստոսի ծննդից յետոյ, վկայում է, որ այդ ամարանոցի
տեղում հարիւր տարի առաջ եղել է ամբողջ բաւական մեծ գիւղա-
քաղաք, որ ունեցել է իւր առանձին վարչութիւնը: Այսպէս Իտա-
լիաում արագութեամբ անհետանում էր ազատ երկրագործական
տարրը: Միայն այն տեղերն, ուր տարածուում էին ընդարձակ ճա-
հիճներ, ուր իշխում էր մահաբեր օդը (մալեարիա), հարուստներն
թողնում էին ազատ և այստեղ էլ հէնց բոյն էին դնում աղքատ
սեպականատէրերն, որոնք ազատեցան ընդհանուր հեղեղից, որ
ողողեց բոլոր երկիրը ստրուկներով: Ի պատիւ կայսրների պէտք է
ասել, որ նոքա աշխատում էին պահպանել աղքատ կալուածա-
տէրերին, մտցնելով հիւպոտէկի (անշարժ գրաւ) գործադրութիւնն,
որոյ շրջիկ գումարի տոկոսն աղքատների և որբերի պահպանու-
թեան համար էր նշանակած:

Վէյի քաղաքում գտնուած արձանագրութիւնից տեսնում ենք,
որ Տրայիանոսն է եղել, որ ցանկացել է այս միջոցով օգնել գիւղական
բնակչաց, բայց ազատ աշխատանքը կորուստից պաշտպանելու այս
փորձն, որ պահպանել են և նորա յաջորդները մինչև Սեպտիմիոս
Սեվերը, օգուտ չբերեց և երրորդ դարին վերաբերուող արձանա-
գրութեանց մէջ չկայ և ոչ մէկն, որ առիթ տար մեզ կարծելու թէ
այդ միջոցները բերել են երկրագործութեան էական շահ, թէև
չգիտենք և այն պատճառները, թէ ինչու այս ձեռնարկութիւնն
անյաջող անցաւ: Կարելի է կարծել, թէ գետինը կորցրեց իւր գինն,
Իտալիա բերած օտարերկրեայ ցորենի պատճառով և աղքատները
հազիւ կարողանում էին հատուցանել անմիջական հարկերը—այս-
պէս իպոտէկները վերջացան և գետինները ծանրաբեռնած պարտ-
քերով անցնում էին հարուստ կալուածատէրերի ձեռքը: Այս մա-
սին կայ ակնարկ Կոստանդիանոս Մեծի օրէնքներում:

Իտալիայի ախտն շուտով արւեւելք էլ անցաւ — այստեղ էլ սկսան
հարուստները յափշտակել երկիրն, ինչպէս յայտնում է մի պաշ-
տօնական վկայութուղթ Կոստանդիանոսի ժամանակուայ: Ինչպէս որ
արեւմուտքում հին աշխարհի ընտիր մարդոց գանգատի ձայնը

բարձրանում էր այս մասին, այնպէս և արեւելքում ձայն բարձրացրին քրիստոնեայ հովիւները: Այս դէպքում նշանաւոր են Ս. Գրիգոր Նազիանզեցու ճառերը: Արեւմուտքում Լիգուրիայի և Էմիլիայի նախկին Հիւպատոս և ապա Միլանի եպիսկոպոս Ս. Ամբրոսիոսը նոյնպէս գանգատում է իւր ժամանակի Հարուստների վերայ, «որոնք ընդարձակում են իրանց ժառանգական կալուածոց սահմաններն անդադար, միացնելով կալուածք կալուածքի հետ, արտաքսելով աղքատներին իրանց՝ Հայրենի ժառանգութիւններից, և որոնք փոխանակ իրանց նման մարդիկ դրացի ունենալու, ընդարձակում են իրանց բնակարանների շուրջն որսարաններ վայրի գազանների համար, կանգնում են գոմեր կենդանեաց համար, և քանդում են մարդոց բնակարանները . . . աղքատները փախչում են օտար երկիրներ, տանելով իրանց հետ զաւակներին, իսկ նոցա կանայք լալիս են, կարծես իրանց ամուսինների թաղման հանդէսը կատարելիս լինէին: Ո՞ր բնակեցան Հայրենիքից արտաքսուած աղքատների հոգերի վերայ Հարուստների որսարանների և պալատների շուրջը—Ստրուկներն և տակաւ առ տակաւ միայն նոքա եղան գիւղական բնակիչներ կազմող տարրը:

Երբ Հարուստները տակաւ առ տակաւ հագարակական հոգերը յափշտակում էին, սկզբում ազատ մարդոց դեռ ևս մնում էր միջոց ինչ պարապելու երկրագործութեամբ, այն է նոքա կարողանում էին կապալաւ առնելու Հարուստների հոգերը կամ իբրեւ վարձկաններ աշխատել Հարուստների կալուածներում: Բայց ստրկութիւնը կամաց կամաց զրկեց նրանց այս արդիւնքից էլ:—

Հռովմայեցի Հարուստներն, եթէ երկրի մշակութիւնը չէր կատարուում նոցա անմիջական հսկողութեան ներքոյ, գործ էին դնում երեք եղանակ իրենց արտերը կառավարելու համար: Նախ իրանց տնտեսութեան կառավարիչ նշանակում էին մի ազատ մարդու՝ կապալառուի կամ կալուածատիրոջ—Առում էր կոչուում նա: Երկրորդ եղանակը գիւղատնտեսութեան կառավարութեան էր այն, որ կալուածոց կառավարիչ նշանակուում էր կամ ազատ անձն կամ ստրուկ, որ վարում էր տնտեսութեան գործն իբրեւ սեպհականատէր, որ լիովին փոխարինում էր տիրոջ: Եւ երրորդ, երբ տէրը

տալիս էր իւր կալուածը ազատ անձին կամ ստրկին կապալով և բոլոր արդիւնաբերութիւնք մնում էին կառավարչին բացի այն որոշեալ մասին, որ ստանում էր կալուածատէրն իբրև կապալավարձ: Բոլոր երեք դէպքերումն էլ, ով էլ կառավարիչ լինէր հարստի կալուածոց, երկրի մշակութիւնը կատարուում էր ստրուկների միջնորդութեամբ: Կառավարիչն երեք դէպքերումն էլ լիազօր տէր էր ստրուկների վերայ և վայելում էր կալուածատիրոջ կատարեալ հաւատարմութիւնը: Ըստ մեծի մասին նա գերդաստանի տէր էր, որոշ դիրք և կարողութիւն ունենում էր, որով նորա վիճակն այլ ստրուկների վիճակից բարձր էր: Եթէ նա ստրուկ էր, տէրը այս հաւատարմատար անձին չէր խառնում ի շարս այլ ստրկաց, նա նորա մէջ մինչև անգամ տեսնում էր մի քանի բարոյական յատկութիւնք էլ: Կոլումբլլան իւր շարադրութեան մէջ « յաղափո գիւղական օրնաբնութեան » պահանջում էլ է բարոյական յատկութիւնք կառավարչից, բայց յայտնելով, որ այնքան որքան ընդունակ է ստրուկի հոգին սեպհականելու բարոյական գրգռմունքներ: Կալուածը մշակող միւս ստրուկներն աւելի ի շարս մեքենաների էին դասուում քան կենդանի արարածների: Վարընը խօսում է երկրագործ ստրուկների վերայ, իբրև կալուածի շարժական պատկանելեաց վերայ, ասելով որ կալուածն պէտք է ունենայ երեք տեսակ շարժական սեպհականութիւնք՝ աշխուշ (երկրագործական գործիք)՝ անբան (կենդանիք) և բանաւոր (ստրուկներ)՝ գրեթէ ամեն կալուածքում, որ մշակուում էր ստրուկների ձեռքերով, նոցա թիւը բաւական մեծ էր լինում, որովհետև իւրաքանչիւր կալուածում լինում էին և դարբիններ, և ղերձակներ և այլ արհեստաւորներ ստրուկներից: Կալուածի տէրն, շրջապատած բազմաթիւ ստրուկներով, սովորաբար աշխատում էր կառավարուելու իւր միջոցներով, առանց դրացիներից մի բան փոխ ուզելու:

Սկզբում մի քանի կալուածներում ազատ մարդիկ պարապում էին, կալուածքը վարձու առնելով, բայց այդ ազատ երկրագործները շուտով անհետացան: Երկրորդ դարում անհետանում են և ազատ կառավարիչներն ու կապալաւուները՝ սրանց նոյնպէս փոխարինում են ստրուկները: Պլինիոս կրտսերը իւր նամակներում թուիլ է այն թշուառու-

Թեան նկարագիրն, որոյ մէջ գտանուում էր նորա ժամանակ խոս-
լական տնտեսութիւնը: Պլինիոսի խօսքերով նորա ժամանակ երկիրը
տակաւ առ տակաւ ուժից ընկաւ, Կոլոնների (ազատ կառավարիչ)
բացակայութեան պատճառով, որոց թիւն օրից օր պակասում է,
երկրի տէրերի խստութեան և Հալածանաց առթիւ: Միւս նամա-
կում նա իւր բարեկամներից մէկին զեկուցանում է, որ դիտաւո-
րութիւն ունի իւր կալուածներում կապալառուներին վերջ դնել
և իւր Հողերը բաժանել Կոլոններին, արդեանց կէսն իրան վերա-
պահելով, իսկ վերջինների աշխատանաց վերայ Հսկող նշանակել
ստրուկներին: Թէ որքան նուազ էր այս Կոլոնների արդիւնքը,
կարելի է տեսնել Կատոնի գրուածքից տնտեսութեան վերայ: Վատ
և դժուար մշակելի Հողից Կոլոնը ստանում էր իւր օգտի Համար $\frac{1}{6}$
մասը արդիւնաբերութեան, իսկ լաւ և ընտիր Հողից $\frac{1}{8}$: Այսպէս
ստրուկութեան ճնշման ներքոյ Հին աշխարհից անհետացան կամաց
կամաց երեք տեսակ ազատ երկրագործներ՝ սեպհականատէրեր, կա-
պալառուներ և մշակներ: Աղքատներն երբեմն Հարուստ կալուածա-
տէրերի մօտ Հաւասար ստրուկների վարձուում էին, վարձը շատ նուազ
էր, իսկ կալուածատիրոջ Համար, որ օգուտ էր քաղում ստրկների
ձրի աշխատանքից, շահաւէտ չէր վարձագինը բարձրացնել: Իրաւ
է, տնտեսութեան մէջ լինում են այնպիսի ըրպէներ, երբ երկու-
ձեռքը շատ թանգ արժէ, զորօրինակ Հնձի ժամանակ. բայց այսպի-
սի դէպքերումն էլ ազատ մշակների դէմ մրցող դուրս էին գալիս
օրով վարձուող Թափառաշրջիկների ամբողջ խմբեր, որոնց գործա-
ռուները բերում էին Ասիայից, Իլլիրիայից և Եգիպտոսից: Վերջա-
պէս ազատ մշակներն այն վիճակին Հասան, որ Հարուստների կա-
լուածներում աշխատում էին ոչ թէ վարձու, այլ միայն կերա-
կուրի և զգեստի Համար: Այս թշուառների մեծ մասին բռնի
ստրկացրին Հարուստներն, որոնց Համար չէին գրած օրէնքները:
Հասարակապետութեան վերջին օրերը ներքին քաղաքական պատե-
րազմների պատճառով անկարգութիւնք և ինքնիշխանութիւնն այն
աստիճանի Հասան, որ ստրկատէրերը մեծ ճանապարհների վերայ
ուղարկում էին զինաւորուած խմբեր և այս սրիկաները բռնու-
թեամբ բռնում էին ճանապարհորդներին, լինէին սղբա ազատ մար-

դիկ կամ օտարի ստրուկներ, և ստրուկ դարձնում փակելով ստորերկրեայ բանտերում և արհեստանոցներում:

Յգոստոս խստութեամբ հրամայեց պատժել աւագակներին և երբեմնապէս հետախուզել երգաստուկները (արգելանոց), ազատելու համար թշուառներին, որոնց բռնի կալանաւորել էին ագահ ստրկատէրերը: Պատահում էր, որ ազատ մարդոց արգելում էին երգաստուկաներում իրանց համաձայնութեամբ, որպէս զի զինուորագրութիւնից ազատ մնան:

Ադրիանոս կայսեր կարգադրութիւնից, որ արգելում է ազատ աշխատաւորներին ստրուկների հետ միասին միւսնոյն արգելանոցում տեղաւորել, երևում է, որ յաջորդ դարերում աղքատութիւնն ու ծանր հարկերը ստիպեցին աղքատներին մի կտոր հացի համար մտնել հարուստների երգաստուկաները: Այսպէս երկրագործական ստրկական աշխատանքը տակաւ առ տակաւ կլանելով ազատ աշխատանքը, միայնակ մնաց տէր և իշխող հարուստների կալուածներում:

Պլինիոս Աւագը վշտալի ոճով նկարագրում է ստրուկների ճնշող ազդեցութիւնը նախկին երկրագործութեան վերայ: «Երկիրն, ասում է նա, որ ցնծութեամբ խայտում էր, երբ հիւպատոսը մաճը քոնած ակօս էր բաց անում նորա մէջ, ներկայումս շղթայակապ ոտներից է ոտնակոխ լինում և մնում է անպտուղ շղթաներով ծանրաբեռնած ստրկական ձեռքերի տակ: Երգաստուկում արգելուած մարդոց ձեռքով կատարուող մշակութիւնն երկրի ողորմելի է, ինչպէս ողորմելի է ամեն ինչ, որ գործում են յուսահատութեան անձնատուր մարդու ձեռքերը»: Յիրաւի հարուստների դաշտերում աշխատում էին ստրուկները, շղթայակապ, որովհետեւ երկրագործութեան համար նշանակուում էին կամ իրանց տիրոջ առաջ յանցաւոր ստրուկները, փախստական ստրուկներն և կամ ուրիշ տէրերից արժան գնով գնուածները, իրանց յանցանաց համար կալուածներն ուղարկուում էին եւ տիրոջ մօտիկ եղած այն ստրուկներն, որոնք կամ ծերութեան կամ խեղանգամ լինելու պատճառով անընդունակ էին իրանց պաշտօնը շարունակելու մեծամեծաց դրանք: Ստրուկների այս վերջին դասն, որ վարժուել էր պարա-

պութեան, գիւղումն էլ, ինչպէս ասում է Ուլրատիրոս, երազում էր
 Հռովմի զուարճութեանց, բաղնիքներէ, հիւրասէր պանդոկներէ և
 սրինգ ածող կանանց մասին: Միթէ կարող էին այս ստրուկներն ե-
 ռանդով աշխատել, կարող էր նոցա աշխատանքը հաւասարուիլ ա-
 զատ մարդու աշխատանքին, որ իւր բոլոր ջանքը գործ է դնում
 զանազան միջոցներով երկիրը պարարտացնելու, որ որքան կարողա-
 նում է բարեփոխում է դաշտի մէջ իւր աշխատանքն և իւր աշխա-
 տանքը կատարում է բոլոր սրտով և հոգով: Պլինիոսը նկատում է,
 որ նորա ժամանակ դադարեցան երկիրը սիրել, իսկ երկիրը պէտք
 է սիրել, որ նա էլ առատ լինի: Գիկերոնի ժամանակ դեռ ևս կային
 Հին Հռովմայեցիք, որոնք սէր և յարգանք էին ցոյց տալիս երկրա-
 գործութեան և իրանց զաւակներին ազդում էին, թէ այս պա-
 րապմունքն աւելի պատուաւոր է քան շատ այլ արհեստներ: Բայց այս
 երկար չտևեց, սկզբում հասարակապետութեան կառավարութիւնն,
 իսկ յետոյ կայսերութիւնը բոլոր հռովմայեցի Հին գերդաստանները
 քաշեց Հռովմ, այնպէս որ, Կոլումելայի վկայութեամբ, նորա ժա-
 մանակ կենցաղավարութիւնն և տնտեսական զբաղմունքը գիւղում
 համարուում էին անարժան կորուստ ժամանակի, անարժան պա-
 րապմունք ազատ մարդու համար: Կայսրների ժամանակի հարուս-
 տը ամենեւին չէր այցելում իւր կալուածներն, որպէս զի չվրդովէ
 իւր հաճելի հանգստութիւնը կապալառուների և կառավարիչների
 գանգատներով: Նորա համար աւելի լաւ էր արդիւնքը հեռուից
 պահալ: Գիւլը տեղափոխուի կնշանակէր կայսեր շնորհից զրկուած
 լինել, որ կայսերութեան ժամանակի մեծատան համար մահից աւե-
 լի սարսափելի էր: Հարուստն ըն այնքան սակաւ էին գնահատում
 իրանց ժառանգական կալուածներն, որ վաճառում էին նրանց ի-
 րանց ամենաշնչին հաճոյքը կատարելու համար: Մի կորնթական
 մետաղից շինած անօթ գնելու համար Գիկերոնի ժամանակակից հա-
 րուստը վաճառում էր իւր կալուածքը: Մարկիալոնն ասում է, որ
 ոսկեգօծ կառք գնելու համար մեծատունը յօդս ցնդում էր ամ-
 բողջ կալուածքի արդիւնքը:

Անթիւ հարստութեանց տէր հռովմայեցի մեծատան համար
 ստոր գործ էր համարուում զբաղուիլ տնտեսական հաշիւներով և

Հակել, Թէ ինչպէս են մշակուում նորա գետինները: Ուստի և երբեմն Հարուստ Իտալիան ծածկուեցաւ անապատներով և նորա հողը մինչև վերջին աստիճան ուժասպառ եղաւ: Հռովմի Համաշխարհական յաղթութիւնք և աշխարհակալութիւնք աւելի ևս նպաստեցին երկրագործութեան անկման Իտալիայում: Մի քանի նահանգների նուաճումից յետ, սոքա ենթարկուեցան Հարկատուութեան բնական բերքերով յօգուտ Հռովմի: Յորեն ստանում էր Հռովմը Սարդինիայից, Եգիպտոսից և մնացած Սփրիկէից որոշեալ քանակութեամբ ամեն տարի, իբրև Հարկ: Օգոստոսի ժամանակ նահանգները Հռովմ Հասցնում էին զանազան տեսակ ցորեն ամեն տարի 810 միլիոն գրուանքայ. այս քանակութիւնից 200,000ը բաժանուում էր ժողովրդեան ձրի: Կիկերոնի խօսելով շահահանգները դարձան երկրագործներ, որոնք աշխատում էին Հռովմը կերակրելու Համար: Վերջն այն եղաւ, որ Իտալիայի ազատ երկրագործները թողին իրանց հողերն և տեղափոխուեցան Հռովմ, որ պարապութեան մէջ ուրիշների հաշուով ապրեն առանց հասկանալու, որ Հռովմի բոլոր բնակիչք այսպէս կախուած էին պատահականութիւնից: Դեռ Տիբերիոսն ասաց, «Հռովմայեցիք կախումն ունին ծովի ալիքներից և փոթորկից և իրանց ոսկեգօծ պալատներում կարող են մեռնել սովից»:

Հարուստների երկիրները, որոնք մատնուած էին ստրուկ կառավարիչների Հաճոյից, մի կերպով մշակուում էին, սերմանելիս սերմնացուի կէսը գողանում էին և հողի արդիւնաբերութիւնը աւելի և աւելի նուազում էր երկրի ուժասպառ լինելից, մասամբ էլ անհոգութիւնից և կանոնաւոր խաբեբայութիւնից և յափշտակութիւնից: Երբեմն կառավարչի և ստրուկների շնորհիւ մեծատան կալուածքը բոլորովին կորցնում էր իւր նախկին գինը: Երբեմն ազատութիւն ստացող ստրուկները ստանում էին իրանց տէրերից ընծայ սոցա կալուածքի մի մասը, որ քաջ մշակում էին ստրուկներն և իսկոյն այդ հողաբաժինների գինը բարձրանում էր, որովհետև սոքա տալիս էին ընտիր ցորեն և անսովոր արդիւնք, այնպէս որ դրացի ստրկատէրերը կասկածում էին այդպիսի ազատուած ստրկներին կախարդութեան և մոգութեան մէջ: Թէ ինչու նոր ա-

զատուած ստրուկների գործն աւելի յաջող էր առաջ գնում քան ստրկատէրերինը. նա՛ արձակեալ ստրուկ դրացին արդարանում էր ասելով. «մեր ստրուկները ուժասպառ եղած չեն, նրանց մենք լաւ կերակրում ենք, տաք հագցնում, մեր գութանները սուր են, բա՛հերը թեթեւ և ամուր, սայլերս պինդ և եղներս ուժեղ: Աւելացրէք սորա վերայ և այն, որ մենք անձամբ աշխատում ենք, գիշերը չենք քնում և ամեն գործի վերայ հսկում ենք: Ահա՛ սորա մէջ է մեր կախարդութիւնը»: Այսպէս գիւղատնտեսական մոգութիւնը մնաց անհասանելի արհեստ և հռովմայեցի հարուստների կալուածոց կառավարիչների համար: Աւելի վատ մշակուում էին հռովմայեցի մեծամեծաց Խտալիայից դուրս գտանուող կալուածներն, որոնք նոքա յափշտակութեամբ ձեռք էին բերել զանազան հեռաւոր նահանգներում, որովհետեւ հսկողութիւնը նոցա վերայ աւելի դժուար էր

Ստրկական աշխատանքն հարուստների կալուածոց ոյժը սպառելով, հասցրեց նրանց այն դրութեան, որ նոցա արդիւնքը հազիւ ծածկում էր ստրուկների պահպանութեան ծախքը: Սորա հետ ստրուկների գինը բարձրացաւ, սոցա թիւը նուազեց այնպէս, որ այս ամենը միասին առած կալուածատէրերին հասցրեց այն եզրակացութեան, որ նոքա թողին երկրագործութիւնն և իրանց արտերը դարձրին արօտատեղեր:

Այս էր ստրկութեան դառն հետեանքներից մէկն և պէտք է խոստովանել, որ այդ հետեանքը սարսափելի էր: Վարրոնն, որ ապրում էր Հասարակապետութեան վերջին օրերում, ասում է. «Հռովմի հիմնադիր Հովիւներն ամենից աւելի աշխատում էին, որ իրանց յետագայ սերունդն երկրագործ անեն. իսկ նոցա որդիք անարգում են նոցա կամքն և կրկին դառնում են անասնապահութեան: Եւ ահա Խտալիան տարուայ որոշ եղանակներին ծածկուում էր բազմաթիւ ջոկերով ու հօտերով և հեծեալ ստրուկ Հովիւներով, հակառակ Կեսարի օրէնքին, որ պարտաւորում էր հօտերի տէրերին նրանց Հովիւների մի երրորդական մասը ազատ անձինքներից ունենալ: Հովիւները թափառում էին տեղից տեղ իրանց կանանց ու կահկարասեաց հետ, նոքա բնակում էին վրաններում, ինչպէս

Նախնական ժամանակներում: Տակաւ առ տակաւ հովիւները դարձան անկարեկից և խստաբարոյ աւազակներ: Փախստական ստրուկներին կազմուեցան աւազակաց խմբեր, որոնք ապաստանարան էին գտնում հովիւների մօտ: Յանդուզն համարձակութեամբ նոքա յարձակուում էին կոլոնների գիւղերի վերայ, աւերում էին ամբողջ ընդարձակ տարածութիւնք: Յայտնի բան է, բոլոր ստրուկները համակրում էին ճանապարհների այս աւազակ հերոսներին: Զորորդ դարում Իտալիաում աւազակութիւնը բոլորովին կազմակերպուեցաւ, աւազակախմբերն իրանց զօրեղ և սրնթաց ձիերի վերայ նստած յայտնուում էին շուտ և շուտով էլ ծածկուում էին լեռներում: Ի զուր Հոնորիոս, Վալէնտինոս և Վաղէս կայսրները հրատարակում էին հրովարտականք, որոնք արգելում էին հովիւներին ձիեր ունենալ:

409 Թուականին հովիւներն ու աւազակները համանիշ անձինք դարձան, ճանապարհներն անապահով եղան յափշտակողների բազմութիւնից: Բայր Կալաֆալիստո-Միլեռն, ի շնորհս Կարկուստոն, պէտք է իջնէ Դաւանար Դիպի Բարբարոս-Միլեռն: Փախստական ստրուկները դարձան նախահայրերն այն բանդիտների, որոնք այսօր էլ բռնանում են Աբրուցցա նահանգում:

Հետաքրքրական են կայսրների կարգադրութիւնք ամեն ինչ կլանող ստրկութեան հեղեղի դէմ: Նախ կայսրները փորձում էին վերականգնել մանր կալուածատէրերի դասակարգը, և կազմել ազատ գիւղականների դաս: Ըստ երևութին այս գործին կարող էր նպաստել հողերի գների շարունակ անկումն: Տրայիանոսի ժամանակ գետինները կորցրին իրանց անուանական գնի երկու և մինչև երեք հինգերորդական մասը: Ներվան օգուտ քաղեց այս հանգամանքից, գնեց մեծ քանակութեամբ գետիններ և բաժանեց աղքատներին. բայց աղքատ դասն այնպէս ապականուել էր դատարկապորտութեամբ, որ չէր կամենում և չգիտէր օգուտ քաղել երկրագործի աշխատաւոր կեանքից: Աղեքսանդր Սեվերոսը փորձեց նշանաւոր գումար փոխ տալու առանց տոկոսիքի գետիններ գնելու համար այն պայմանով, որ կալուածատէրերը ստացած գումարը վճարեն իւրաքանչիւր տարի մաս առ մաս բնական բերքերով, բայց այս միջոցն էլ յաջողութիւն

չունեցաւ, այնպէս, որ Պերտինաքս կայսրը ղրկեց ներվայի գործադրած միջոցին և սկսաւ ձրի բաժանել ընտիր Հողեր: Բայց այս էլ անօգուտ երևեցաւ, երիտասարդները նաՀանգներից խումբ խումբ ղիմում էին Հռովմ, ուր կարող էին պարագ կեանք անց կացնել ի հաշիւ պետութեան: Պատուաւոր անձինք, ըստ ասութեան Վարրոնի, թողնում էին խոփն, որպէս զի Հռովմում կրկէսում և թատրոնում ծափահարեն: Հռովմի ընտիր անձինք, երբ նրանց այլ ևս չէին գրաւում քաղաքական վէճերը, խոստովանում էին, որ հարկաւոր է մաքրել Հռովմը — այս դատարկապորտութեան բոյնը սեղանաբոյծներից, որոնք սպառնում էին Հռովմը, սորա շրջակայքն և ամբողջ Իտալիան անապատ դարձնել, բայց յաճախ այն եզրակացութեան էին գալիս, որ իրանց միջոցներն անձեռնհաս են ուղղելու ազգը: Եւ յիշաւ մինչև իսկ խիստ միջոցներն, որպիսիք էին Դոմիտիանոսի օրէնքներն, որ Հրամայում էին բոլոր նաՀանգներում ոչնչացնել որթի այգիք և փոխարէնը ցորեն ցանել, Հետևանք չունեցան: Իսկապէս չկար միջոց էլ այսպիսի օրէնքներն իրագործելու համար, որովհետև նաՀանգները թափուր էին մարդկերանցից: այս իրողութիւն էր առաջին դարին մօտիկ ժամանակներում: Յունաստանը Պլուտարքոսի ժամանակ կարողանում էր միայն 3000 զինուոր տալ, մինչդեռ այդքան բազմութիւնը Պլատայի զօրքերն էին կազմում: Երբորդ դարի վերջին Աւրելիանոս նաՀանգական դեկլորիոններին պատասխանատու արաւ հարկերի հատուցման մասին, նա նրանց լիազօր իշխանութիւն տուեց, տէրերից թողած երկիրները տալ նրան, ով միայն կցանկանայ նրանց մշակել, որ հարկերը կանոնաւոր կերպով վճարուին: Կայսերութեան սկզբում, երբ Իտալիան դժուարութեամբ կարողանում էր հանդէս բերելու պատերազմի ընդունակ զինուորներ, Գալլիան պարծենում էր իւր բնակիչների ծաղկեալ վիճակով, որոնք խաղաղութեամբ պարագում էին երկրագործութեամբ և մեղկացած չէին: Բայց երեք դարից յետ այս երկիրն էլ բնակիչներից թափուր մնաց: Երկրորդ դարում Ռէյմսում և Տրուաում երկիրը մշակուում էր, իսկ այլ տեղերում, ինչպէս զորօրինակ Շալոնում Օտինի վերայ, դաշտերը ծածկուեցան անպիտան խոտով և Պրոբոսի Հրամանաւ տնկած որթերը չո-

րացան և վայրենացան, երկրագործները թողին իրանց հողերն, և հռովմէական լեզէոնների շինած զինուորական ճանապարհներն անանցանելի դարձան: Կոստանդիանոսը ստիպուեցաւ այս տեղերի արքունի հարկերի չորրորդ մասը անվճար թողնել, ընծայել:

Վերջապէս Կայսրների վերջին միջոցն պարապ մնացած հողերը բնակիչներով լցնելու և երկրագործութեան կենդանութիւն տալու համար, եղաւ փորձն Իտալիայում և նահանգներում բնակեցնել բարբարոսներին (օտարազգեւորներին): Օգոստոսը Գաղղիաում Հռենոսի ափերում բնակեցրեց Ուբիացիներին, Սիկամբրներին, Մարկոս Աւրելիոսը Իտալիա հրաւիրեց Մարկոմաններին. իսկ Դակիա Կվադներին: Աւրելիանոս Տոսկանայի դաշտերը բարբարոսներին շնորհեց:

Իրոկլետիանոսը Դանուբի ափերում բնակեցրեց Բաստարներին, Կարպիեցիներին և Սարմատացիներին: Կոստանդիանոսի ժամանակ գերմանացիք բնակեցան Հռենոսի ափերում, 300,000 Սարմատացիք տեղափոխուեցան Թրակիա, Մակեդոնիա և Իտալիա: Վալենտիանոսի ժամանակ Պադոս (Պո) գետի պտղաբեր ափերը բռնեցին Ալլեմաններն, իսկ Դոթացիք Պարմայի և Մոտենայի դաշտերը: Չնայելով այս միջոցներին աղքատութիւնն աւելի և աւելի զօրանում էր, մանաւանդ երբ երրորդ դարում Հրատարակուեցաւ օրէնք, որ կոլոններին անշարժ էր կացուցանում իրանց տեղերում: Հոնորիոսը 395 թուականին գրում է, «մեր տեսուչների զեկուցմամբ և վկայութեամբ և Հին Հոգաշափական մատենից ցուցմամբ մօտ 528,042 եուզէր մշակելի գետին կամպանիաում ներկայումս առանց մշակութեան է մնում և դառնում է անապատ. ուստի և մենք հրամայեցինք թողուլ հարկն այդ հողերից և նոցա ցուցակագրութիւնքն այրել, իբրեւ անպէտք: Նոյնպիսի թողութիւն հարկաց եղաւ 401 և 422 թուականներին: Ինքնը միմեանց հետեռոյ հրովարտակներով վերաբերութեամբ Աֆրիկայի և Իտալիայի դաշտերին: Երկիրն ու բնակիչք տակաւ առ տակաւ թուլանում էին, դաշտերն անապատ դառնում և անտառ: Գաղղիաում մինչև իսկ Իտալիաում բոլսան ընդարձակ անտառներ, որոնք միայն 5 ըր և 6 ըր դարերի վերջերում սկսան մաքրել Բենետիկտեանք: